

## **Չեմ կարծում, թե հանրաքվեն ավելի պառակտեց հասարակությանը, գուցե չկարողացավ պառակտումները հաղթահարել**

Հարցազրույց Սահմանադրական հանրաքվեն դիտարկած ԵԽԽՎ պատվիրակության ղեկավար Անդրեաս ԳՐՈՍԻ հետ

**- Պրն. Գրոս, ուրախ եմ, որ հինգ տարի հետո նորից առիթ ունեմ Ձեզնից հարցազրույց վերցնելու: Ծնորհակալություն Ձեր պատրաստակամության եւ ԵԽԽՎ պատվիրակության կողմից ղեկտեմբերի 6-ի հանրաքվեին տրված ճշմարիտ եւ խորը գնահատականների համար: Խնդրում եմ փոքր-ինչ մանրամասնել՝ ովքե՞ր էին ընդգրկված ԵԽԽՎ բազմակուսակցական պատվիրակության կազմում: Արդյոք պատրաստվո՞ւմ եք Ձեր դիտարկումները եւ եզրակացությունները ներկայացնել ԵԽԽՎ-ին, եւ, եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով եւ ֆորմատով:**

- Դժբախտաբար, մեր պատվիրակությունը փոքր էր: Չափազանց շատ խորհրդարանականներ չկարողացան մեզ միանալ, քանի որ ազգային խորհրդարաններում բյուջեի հաստատման լուծումներին էին մասնակցում եւ չկարողացան գալ Երեւան:

Հանրաքվեից հետո մենք ամփոփեցինք մեր տպավորությունները եւ դիտարկումները կարճ մամլո հաղորդագրության մեջ, որն էլ հիմք ծառայեց ղեկտեմբերի 9-ին ԵԽԽՎ Մոնիտորինգի հանձնաժողովում առաջին քննարկման համար: Մասնակցում էին մեր պատվիրակությունից երկու անդամներ, նաեւ Հայաստանից մեր գործընկեր Արմեն Ռուստամյանը: Հաջորդիվ մենք կազմելու ենք հուշագիր, որն ավելի շատ դիտարկումներ կընդգրկի, ինչպես նաեւ երեւանյան պատասխանատու անձանց կողմից մեզ ուղարկված որոշ մեկնաբանություններ: Այս հուշագիրը մաս կկազմի խորհրդաժողովին ներկայացվող առաջընթացի զեկույցին, որը քննարկվելու է Բյուրոյում, այնուհետ՝ ԵԽԽՎ առաջիկա նստաշրջանի լիազումար նիստում: Այն կգումարվի 2016-ի հունվարի վերջին շաբաթում: Քննարկումը կկայանա այդ շաբաթվա երկուշաբթի օրը:

**- Ձեր պատվիրակության գնահատականը՝ «Հանրաքվեն ուղղորդված էր քաղաքական շահագրգռություններով՝ հայ հանրության կարիքներին արձագանքելու փոխարեն», ուշագրավ էր: Ինչպե՞ս էր**

**հաջողվել իրականության այդքան խորը եւ ճշգրիտ ընկալման հասնել մի քանի օրում:**

- Մենք քննարկումներ էինք ունեցել շուրջ 25 հոգու հետ՝ ՀԿ-ներից, լրատվադաշտից, վարչակազմից, իշխող եւ ընդդիմադիր կուսակցություններից, ինչպես նաեւ հանդիպել ենք դիվանագետների եւ շահագրգիռ քաղաքացիների: Իհարկե, նաեւ ընթերցել ենք Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի զեկույցները, նաեւ վերջին շաբաթներում եւ ամիսներին միջազգային մամուլում տեղ գտած հոդվածները, որտեղ վերլուծվում էր, փորձ էր արվում հասկանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում: Եվ եթե ընդունակ ես լսել ու կարդալ նաեւ տողատակերում, գիտես երկրի պատմությունը, տարածաշրջանի քաղաքական դրվածքները, սկսում ես ինչ-որ բան հասկանալ: Բայց դա միշտ էլ դժվար խնդիր է, եւ ես երբեք չեմ կարծում, թե բավարար իմացություն ունեմ, միշտ էլ պատրաստ եմ ավելին տեղեկանալու:

Նաեւ կիրակի օրվա հանրաքվեի ընթացքում շփվեցի քաղաքացիների հետ, որոնց հանդիպում էի, եւ փորձեցի հասկանալ, թե իրենք ինչպես են տեսնում հանրաքվեն եւ դրա ավելի լայն կոնտեքստը:

**- Մեկ այլ մեջբերում. «Առանցքային սահմանադրական փոփոխությունը՝ նախագահականից խորհրդարանական համակարգի անցումը, չափազանց շատ քաղաքացիների կողմից ընկալվեց որպես գործող նախագահի համար պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտից հետո իշխանության մնալու միջոց»:** Հենց միայն այս ֆրազը քողագերծում է մաներումները, հաշվարկները, լատենա մտադրությունները, որ նախագահ Սարգսյանը կարող էր ունենալ: **Կարո՞ղ եմ խնդրել այն մեկնաբանեք:**

- Դա հիպոթեզ է, որին ինքս հանգել եմ բոլոր այն խոսակցությունների, շփումների հանրագումարում, որոնց մասին վերը հիշատակեցի: Դա ուղղակիորեն հասցեագրված չէ նախագահ Սարգսյանին, որի մտադրություններին ինքս ծանոթ չեմ, իմ՝ Երեւանում գտնվելու ընթացքում նա ինձ չի հրավիրել, ես նրան չեմ հանդիպել: Այդուհանդերձ, ես նկատել եմ, որ շատ մարդիկ են շփոթության մեջ նրա մտադրությունների առնչությամբ:

Չնայած նրա մտերիմ գործընկերներից մեկը, որը նաեւ իմ ընկերն է ու նախկին կոլեգան (յոթ տարի առաջ մենք երկուսս Սերբիայի ընտրությունների դիտորդ-զեկուցողներ ենք եղել) պնդում է, որ այսօրվա նախագահը մտադրություն չունի պաշտոնավարման երկրորդ ժամկետի ավարտից հետո մնալ իշխանությունում: Սակայն, միեւնույն է, հասարակության շրջանում չորսկողմը խորը կասկածամտություն եւ ասեկոսեններ են առկա, եւ պատասխանատու անձանց պարտականությունն է վստահեցնել սեփական քաղաքացիներին, թե իրենք իրականում ինչ մտադրություններ ունեն եւ իրականում ինչի են ձգտում հասնել:

**- Դուք նաեւ թվարկել էիք Ընտրական օրենսգրքի չվերջացող ոտնահարումներից մի քանիսը: Ձեր տպավորությամբ, ո՞ր գործոնն է ավելի մեծ դեր կատարում այդքան ընտրախախտումներ գեներացնելու գործում՝ Ընտրական օրենսգրքի «հնարքներն» ու անկատարությունները, թե՞ Հայաստանի իշխանությունների**

**հանցավոր էությունը, որ սովոր են ամեն միջոցով հասնելու ցանկալի արդյունքին:**

- Կարծում եմ՝ ճիշտ չի լինի խոսել իշխանությունների «հանցավոր էության» մասին: Իմ կոլեգաներից մեկն ինձ ասաց, որ մենք միանգամայն ճշգրիտ ենք թվարկել համակարգի թերությունները, որոնք ինքը նույնպես կցանկանար հաղթահարված տեսնել. կոլեգաս կարծում է, որ համակարգը փոխելով՝ հնարավոր է այդ խախտումներից շատերը հաղթահարել: Պետք է կրկնեմ, որ որոշ խախտումներ վերացնելու ուղղությամբ իրոք քայլեր արվել են. օրինակ, մահացած անձինք կարծես թե ցուցակներում են մնացել միայն այն դեպքում, եթե նրանք արտերկրում են մահացել, թվում է՝ բավականին հաջող վերացվել է նաև «կարուսել» կոչվող ընտրախախտումը: Եվ պաշտոնյաներն էլ, որոնք թույլ են տալիս իրենց կաշառք վերցնել, գիտեն, որ եթե բռնվեն, ավելի խիստ պատժի կարժանանան, քան անցյալում:

Այսինքն՝ ինչ-որ ջանքեր գործադրվում են, եւ ես կցանկանայի աջակցություն հայտնել դրանց արդյունավետությանը, որպեսզի հաղթահարվեն առկա ձախողումները: Միայն ճիշտ, օրինական գործընթացի արդյունքում կարող է ստացվել ցանկալի արդյունքի լեգիտիմություն եւ հասարակության վստահության վերականգնում, ինչի կարիքը քաղաքական գործիչները Հայաստանում, ինչպես եւ այլուր, մնացյալ աշխարհում շատ ունեն:

**- Ձեր կարծիքով, որքանո՞վ են արդարացված երկյուղները, թե այս հանրաքվեն ավելի պառակտեց հայաստանյան հասարակությանը, ավելի խորացրեց վստահության ճգնաժամը երկրի նախագահի եւ իր կառավարության հանդեպ:**

- Անկեղծորեն, ես չեմ կարծում, թե այս հանրաքվեն ավելի պառակտեց հայաստանյան հասարակությանը, գուցե այն չկարողացավ առկա պառակտումները հաղթահարել, ինչպես կարելի էր հույս ունենալ, բայց չեմ կարծում, թե դրանք ավելի խորացրեց: Մենք ամրագրել էինք հայտարարությունում, որ ցանկալի կլինեի իշխանություններն ավելի շատ ժամանակ եւ ջանքեր տրամադրեին քաղաքացիների հետ քննարկումներին, որպեսզի մարդիկ գիտակցեին, որ իրենց է պատկանում այդ սահմանադրությունը, ինչպես պատշաճ է, որ լինի որեւէ սահմանադրական բարեփոխման գործընթացում: Այդ ճանապարհով իշխանությունները կկարողանային նպաստել նաև հասարակության համախմբմանը եւ անցյալից եկող բաժանումների, պառակտումների հաղթահարմանը: Թեեւ նման արդյունքի հասնելու համար պետք է նաև ի գործու լինես տնտեսական անկումը կանգնեցնել եւ բազմաթիվ քաղաքացիների մտահոգությունները փարատել:

**- Օգտվելով հանգամանքից, որ մեկ ամիս առաջ Դուք ղեկավարել եք Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին հետևած ԵԽԽՎ դիտորդական առաքելությունը, խնդրում եմ համեմատեք ընտրական գործընթացները երկու երկրներում: Որտե՞ղ է գործընթացը թվում ավելի ժողովրդավարական՝ Հայաստանո՞ւմ, թե՞ Թուրքիայում եւ ինչու:**

- Դա շատ դժվար խնդիր է, հազիվ թե այս երկու երկրները հնարավոր է համեմատել: Չափերը, մշակույթները, պատմությունը, խնդիրները, նաև վերջին 15 տարվա զարգացումները ծայրահեղ տարբեր են: Թուրքիայում կան ուժեղ, երբեմն գրեթե ֆանատիկ կուսակցություններ եւ շատ ակտիվ

քաղաքացիական հասարակություն, արդեն 13 տարի իշխանության ղեկին է նոր կուսակցություն, որը շատ արդյունավետ աշխատեց եւ կարողացավ բարձրացնել բնակչության աղքատ եւ միջին խավերի 90 տոկոսի բարեկեցությունը, նաեւ ընդլայնեց ժողովրդավարությունը, մարդու իրավունքների հանդեպ հարգանքը: Սակայն վերջին երեք տարում նորից հետընթաց է դիտվում, ամենաբարձր, ղեկավար շրջանակում տեսանելի են ավտորիտարիզմի հակումներ, վայրի լարվածություն է ծագել Թուրքիայի հիմնական մարտահրավերի, այսպես կոչված՝ քրդական հարցում, նաեւ նոր խտրականություն, ագրեսիա է գործադրվում լրատվադաշտում եւ ընդդիմությունում քննադատաբար մտածողների հանդեպ:

Հայաստանի հասարակությունը քաղաքական առումով շատ ավելի ապատիկ է, նվազ տաքարյուն, երկրի վրա դրոշմ են թողնում ահռելի արտագաղթը, տնտեսական դժվարությունները, թույլ քաղաքական կուսակցությունները:

Թուրքական ընտրությունները վտանգված էին բռնություններով, վախերով եւ լարվածությամբ: Հայաստանյան հանրաքվեում, չնայած բոլոր տնտեսական դժվարություններին, մթնոլորտը խաղաղ էր, նոր սահմանադրության նախագիծն էլ ուղղված էր համակարգի ավտորիտար բնույթը կրճատելուն: Մինչդեռ Թուրքիայում նախագահ Էրդողանը ցանկանում է ավելի ուժեղացնել իր՝ առանց այն էլ մեծ իշխանությունը, բայց ակտիվ հասարակության շատ հատվածների կողմից դիմակայության է հանդիպում: Այնուամենայնիվ, երկու երկրներն էլ հսկայական հնարավորություններ ունեն իրապես հզորացնելու եւ զարգացնելու իրենց ժողովրդավարությունները եւ չպետք է այդ հնարավորությունները բաց թողնեն:

**- Ընտրական գործընթացներին առնչվող խնդիրները թե Թուրքիայում, թե Հայաստանում բազմաթիվ արմատներ ու պատճառներ ունեն: Սակայն կան նաեւ թերություններ, որ առաջին դեմքերի լատենտ հաշվարկների ու մտադրությունների արգասիք են: Ընտրական գործընթացներից դատելով՝ ո՞ր առաջնորդն է ավելի ավտորիտար եւ վտանգավոր ժողովրդավարության համար՝ Թուրքիայի գործո՞ղ նախագահը, թե՞ Հայաստանի:**

- Ես Էրդողանին շատ ավելի լավ եմ ճանաչում, շատ ավելի երկար եւ իր մասին շատ ավելին գիտեմ, քան Սարգսյանի, դրա համար էլ անարդար կլինեմ, եթե փորձեմ այսօր այդ հարցին պատասխանել: Ես պատրաստ եմ դա անել ապագայում, երբ ավելի շատ այցելություններ կատարած լինեմ Հայաստան, ինչը միանգամայն հնարավոր է 2016-ին:

**Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Օմբուդսմենի գրությունը Հանրաքվեի ընթացքում հնարավոր իրավախախտումների վերաբերյալ

**Այսօր Օմբուդսմեն Կարեն Անդրեասյանը Հանրաքվեի ընթացքում հնարավոր իրավախախտումների վերաբերյալ Գլխավոր դատախազին, Ոստիկանության պետին, Քննչական կոմիտեի նախագահին եւ Հատուկ Քննչական ծառայության պետին է ուղարկել գրություն, որը ներկայացնում ենք ստորեւ.**

«2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած հանրաքվեին տեղի ունեցած խախտումների վերաբերյալ մենք ստացել ենք 67 ահազանգ: Բացի նշված ահազանգերից, եղել են նաեւ համանման խախտումների վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներ, որոնց իսկությունը դեռեւս ամբողջությամբ ստուգված չէ: Հնարավոր խախտումների մասին այս տեղեկությունները խորապես մտահոգել են մեզ եւ քվեարկությանը մասնակցած բազմաթիվ քաղաքացիների, ինչպես նաեւ առաջացրել են առանձին քաղաքական ուժերի ու միջազգային որոշ գործընկերների անհանգստությունը:

Մեր ստացած ահազանգերից ու տարածված մյուս տեղեկություններից մենք առանձնացրել ենք հատկապես այն խնդիրներն ու միջադեպերը, որոնք ամենախնդրահարույցն են եւ առերեւույթ պարունակում են հանցագործության հատկանիշներ: Ակնկալում ենք արդյունավետ համագործակցություն, որը կարող է համարվել այդպիսին, եթե հնարավորինս արագ բացահայտվեն եւ խստորեն պատժվեն այս եւ այլ միջադեպերում անմիջականորեն կամ անուղղակիորեն ներգրավված բոլոր անձինք, ովքեր հանրաքվեի կապակցությամբ քրեորեն պատժելի արարք են կատարել:

Չափազանց կարելու է նաեւ, որ բոլոր ահազանգերի ու գանգատների մանրակրկիտ ստուգման արդյունքում բացահայտվեն նաեւ վարչական ռեսուրսի օգտագործման բոլոր դեպքերը, եւ նման չարաշահում թույլ տված պաշտոնատար անձինք եւս ենթարկվեն խստագույն պատասխանատվության:

Պատրաստակամություն ենք հայտնում մեր ունեցած տվյալներով հնարավորինս օժանդակել դեպքերի օբյեկտիվ քննությանը: Համոզված ենք, որ խախտումներ կատարած անձանց բացահայտումն ու խստագույն պատասխանատվության ենթարկելը կամրապնդի հանրության վստահությունը թե իրավապահ համակարգի եւ թե ընտրական գործընթացների նկատմամբ:

Ստորեւ ներկայացնում ենք կասկած հարուցող եւ մեզ հայտնի բոլոր միջադեպերի ցանկը, որն առաջիկայում կարող է համալրվել

քաղաքացիների նոր բողոքների եւ այլ համապատասխան հրապարակումների պարագայում:

Թիվ 4/26 տեղամաս - քվեաթերթիկների հափշտակության եւ փոփոխման մասին բողոք. քաղաքացին մեզ հայտնել է, որ քվեաթերթիկները հափշտակել եւ փոխարինել են, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել,

Թիվ 1/32 տեղամաս – քվեաթերթիկների հաշվարկման ընթացքում անօրինականությունների մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 4/5 տեղամաս - քվեաթերթիկների հափշտակության եւ փոփոխման մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 4/32 տեղամաս - քվեաթերթիկների հափշտակության եւ փոփոխման մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 4/33 տեղամաս – քվեաթերթիկների հափշտակության եւ փոփոխման մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 4/28 տեղամաս - քվեաթերթիկների հափշտակության եւ փոփոխման մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 4/20 տեղամաս - քվեաթերթիկների հաշվարկման ընթացքում անօրինականությունների կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=BPVxEdpAy0U>),

Թիվ 9/27 տեղամաս – լցուման մասին ահազանգ (ըստ քաղաքացու՝ լցնում է տեղի ունեցել, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 12/11 տեղամաս – լցուման մասին ահազանգ (քաղաքացին հայտնել է լցուման մասին, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 27/37 տեղամաս – լցուման կասկած (ահազանգ ՅԱԿ-ից),

Թիվ 7/2 տեղամաս – լցուման եւ քվեաթերթիկների փոփոխման փորձի մասին բողոք (ահազանգ ՅԱԿ ներկայացուցչից),

Թիվ 13/22 տեղամաս - լցուման կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=n6w-UXnWNao>)

Թիվ 13/22 տեղամաս – քվեաթերթիկների սխալ պահպանման խնդիր, լցուման կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=n6w-UXnWNao>),

Թիվ 25/33 տեղամաս – լցուման դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=vk29A9IO32I>),

Թիվ 34/28 տեղամասում – լցուման դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=Yunpd12R1y8>),

Թիվ 7/14 տեղամաս – ընտրակաշառքի կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=UOYbpSrPx1o>),

Թիվ 7/32 եւ 7/33 տեղամասերի հարակից տարածք – ընտրակաշառքի կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=O1a7xGMTiGg>),

Թիվ 1/8 տեղամաս – ուղղորդված քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=gr9ytPdDxXw>),

Թիվ 3/18 տեղամաս – ուղղորդված քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=OAFbXIIzbnM>),

Թիվ 4/13 տեղամաս - ուղղորդված քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=yHn-e3RELiA>,  
<https://www.youtube.com/watch?v=rS1Z33STBEw>,  
<https://www.youtube.com/watch?v=a97aVDts2IU>),

Թիվ 10/18 տեղամաս - ուղղորդված քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=wBtjFKB6Rgo>),

Թիվ 34/30 տեղամաս - ուղղորդված քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=-4OW9FX31rw`0:02-1:35>),

Թիվ 2/14 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(քաղաքացին ահազանգել է, որ իր, ամուսնու եւ դստեր փոխարեն արդեն քվեարկված է, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 8/4 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության մասին ահազանգ, քվեարկության ուղղորդման փորձի մասին դժգոհություն  
(քաղաքացին տեղեկացրել է, որ իր եւ իր ընտանիքի անդամների փոխարեն քվեարկված է, իրեն հորդորել են չգնալ քվեարկության, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 22/12 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության մասին բողոք  
(քաղաքացին հայտնել է, որ իր փոխարեն քվեարկված է, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 23/01 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության մասին բողոք  
(քաղաքացին նշել է, որ իր փոխարեն քվեարկված է, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 1/8 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=roRPtOMBysg>),

Թիվ 4/5 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=Nh87f34jUyk>),

Թիվ 5/21 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=Zj2o2OKhjkM>),

Թիվ 5/21 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
([https://www.youtube.com/watch?v=kcs\\_U22OquU](https://www.youtube.com/watch?v=kcs_U22OquU)),

Թիվ 5/21 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության խնդիր  
(<https://www.youtube.com/watch?v=DLw85wf5zpo>),

Թիվ 6/16 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=MK3NsC6aAEI>),

Թիվ 6/4 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=QuU306lz-Lc>),

Թիվ 8/25 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=MKq1yv6A1Bo>),

Թիվ 9/32 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=II1a5aie1qY>),

Թիվ 11/21 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=L2pupn46sCI>),

Թիվ 12/28 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=m7CMFqzwi2E>),

Թիվ 14/4 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=S8PRI2WxCXs>),

Թիվ 34/01 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=EtUm1fJRPVs`0:02-2:25>),

Թիվ 34/19 տեղամաս - այլ անձի փոխարեն քվեարկության դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=EtUm1fJRPVs`2:26->),

Թիվ 34/31 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության կամ  
լցուման կասկած (<https://www.youtube.com/watch?v=gu5e9xrt7IE>),

Թիվ 35/37 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության դեպքի  
մասին հաղորդում (<https://www.youtube.com/watch?v=l4gQ8z7koOI>),

Թիվ 35/40 տեղամաս – այլ անձի փոխարեն քվեարկության կասկած



([https://www.youtube.com/watch?v=sCLjBSXM\\_38](https://www.youtube.com/watch?v=sCLjBSXM_38)),

Թիվ 11/3 տեղամաս – կրկնակի քվեարկության դեպքի մասին հաղորդում  
(<http://newsbook.am/?p=72107/tarber+hagustnerov+krknaki+qvearkuty+n+erkrord+depqn+e+ardzanagrvel&l=am>),

Թիվ 11/3 տեղամաս – կրկնակի քվեարկության դեպքի մասին հաղորդում  
(<http://newsbook.am/?p=72101/mievnuy+n+andzy+qvearkel+e+tarber+hagustnerov+lusankarner&l=am>),

Թիվ 16/23 տեղամաս – կրկնակի քվեարկության կասկած  
(<http://past.am/?p=25475&l=am>),

Թիվ 37/9 տեղամաս - կրկնակի քվեարկության փորձի կասկած  
([https://www.youtube.com/watch?v=2TqPN0OH\\_HY](https://www.youtube.com/watch?v=2TqPN0OH_HY)):

Թիվ 3/6 տեղամաս – ընտրական փաստաթղթում կեղծ գրառումներ կատարելու կասկած  
(<https://www.youtube.com/watch?v=hITbYgmOqbY>),

Թիվ 7/4 տեղամաս – քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում հավանական ապօրինությունների մասին բողոք (ահազանգ ՀԱԿ ներկայացուցից),

Թիվ 7/24 տեղամաս - քվեաթերթիկների հաշվարկման ընթացքում անօրինականությունների փորձի մասին բողոք (ահազանգ ՀԱԿ ներկայացուցից),

Թիվ 4/17 տեղամաս - քվեաթերթիկների հաշվարկման ընթացքում անօրինականությունների մասին դժգոհություն (ահազանգ ՀԱԿ ներկայացուցից),

Թիվ 10/18 տեղամաս – քվեարկության արդյունքների փոփոխման կասկած (<https://www.youtube.com/watch?v=5bPEI2j--YY>),

Թիվ 13/23 տեղամաս – քվեաթերթիկների պահպանման խախտման դեպք, քվեարկության արդյունքների փոփոխման կասկած  
(<http://yn.am/?index&p=54830&l=am>),

Թիվ 35/1 տեղամաս – քվեարկության արդյունքների կեղծման մասին բողոք (<http://galatv.am/hy/news/132855/>),

Թիվ 5/28 տեղամաս - լրագրողի գործունեության խոչընդոտման մասին բողոք  
(լրատվամիջոցի խմբագիրն ահազանգել է, որ լրագրողի տեխնիկական միջոցները վերցրել են, նրա համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 7/14 տեղամաս – լրագրողի եւ դիտորդի գործունեության խոչընդոտման մասին բողոք (քաղաքացին տեղեկացրել է, որ հանձնաժողովի անդամների եւ լրագրողների ու դիտորդների միջեւ ընդհարումներ են եղել, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել),

Թիվ 10/14 տեղամաս – հանձնաժողովի անդամի գործունեության խոչընդոտման մասին դիմում (ահազանգ եւ դիմում ՀԱԿ ներկայացուցից),

Թիվ 5/1 տեղամաս – անձի նկատմամբ բռնության դեպք (ահազանգ «ժառանգության» ներկայացուցից),

Թիվ 1/8 տեղամաս - լրագրողի/դիտորդի գործունեության խոչընդոտման խնդիր  
(<https://www.youtube.com/watch?v=87tmXS6cUKQ>,  
<https://www.youtube.com/watch?v=xIcTsraxW5k>,  
[https://www.youtube.com/watch?v=paEUDcIoZL0` 4:02-4:55](https://www.youtube.com/watch?v=paEUDcIoZL0) րոպեներ),

Թիվ 6/9 տեղամաս – լրագրողի լրագրողի գործունեության խոչընդոտման դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=hBxFvWVQxh0>,  
<https://www.youtube.com/watch?v=dzQzeOFETkA>),

Թիվ 4/28 տեղամաս - լրագրողի գործունեության խոչընդոտման դեպք <https://www.youtube.com/watch?v=Ab7eiu33ZUs>,

Թիվ 10/18 տեղամաս – լրագրողի գործունեության խոչընդոտման դեպք ([https://www.youtube.com/watch?v=0jn67v\\_plkQ` 2:05-2:15](https://www.youtube.com/watch?v=0jn67v_plkQ)),

Թիվ 10/20 տեղամաս – լրագրողի գործունեության խոչընդոտման դեպք ([https://www.youtube.com/watch?v=IeEvj9\\_Pyvw](https://www.youtube.com/watch?v=IeEvj9_Pyvw)),

Թիվ 10/20 տեղամաս – լրագրողի գործունեության խոչընդոտման խնդիր (<https://www.youtube.com/watch?v=wlnsIN-aIL4>),

Թիվ 4/1 տեղամաս – դիտորդի/լրագրողի գործունեության խոչընդոտման խնդիր  
(<https://www.youtube.com/watch?v=AjRXqAHYkKI>,  
<https://www.youtube.com/watch?v=ZsbToL7HCK8>),

Թիվ 9/1 տեղամաս – դիտորդի/լրագրողի գործունեության խոչընդոտման մասին բողոք (քաղաքացին հայտնել է, որ իր լուսանկարահանող սարքը վերցրել են, քաղաքացու համաձայնությամբ տվյալները կարող են տրամադրվել, տեսանյութ՝ <https://www.youtube.com/watch?v=LmstlZzy7t0>),

Թիվ 35/1 տեղամաս – դիտորդի գործունեության խոչընդոտման դեպք (<http://galatv.am/hy/news/132855/>),

Թիվ 6/6 տեղամաս – դիտորդի գործունեության խոչընդոտման մասին դժգոհություն (<https://www.youtube.com/watch?v=r6iCIIh4od0>),  
Թիվ 8/27 տեղամաս – դիտորդի գործունեության խոչընդոտման, ընտրական փաստաթղթերին ծանոթանալ չթույլատրելու դեպք (<https://www.youtube.com/watch?v=cm4Prn6sulw>),

Թիվ 6/9 տեղամաս – հանձնաժողովի անդամի գործունեության խոչընդոտման դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=hBxFvWVQxh0>,  
<https://www.youtube.com/watch?v=dzQzeOFETkA>),

Թիվ 9/14 տեղամաս – հարձակում տեղամասի վրա, հանձնաժողովի գործունեության խոչընդոտման խնդիր  
(<https://www.youtube.com/watch?v=IP-jewuGUK4>),

Թիվ 10/24 տեղամաս – հանձնաժողովի անդամի գործունեության խոչընդոտման խնդիր  
([https://www.youtube.com/watch?v=3qhxzCu\\_thY](https://www.youtube.com/watch?v=3qhxzCu_thY)),

Թիվ 9/23 տեղամաս – կնիքի պահպանման կանոնների խախտման կասկած (<https://www.youtube.com/watch?v=IGohY-4D6DE>),

Թիվ 9/23 տեղամաս – կնիքի պահպանման կանոնների խախտման կասկած (<https://www.youtube.com/watch?v=IGohY-4D6DE>),

Թիվ 34/28 տեղամաս – կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելու դեպք  
(<https://www.youtube.com/watch?v=QhDOh4DCgnw>),

Բացի վերը նշված դեպքերից, հրապարակվել են նաեւ որոշ այլ տեսանյութեր, որոնցից պարզ չեն տեղամասերի համարները, սակայն դրանցում եւս կան հնարավոր խախտումների մասին տեղեկություններ, այդ թվում՝ ուղղորդված քվեարկություն կազմակերպելու, լրագրողի գործունեությանը խոչընդոտելու (տեղափոխում երթուղային, տաքսի եւ շտապօգնության «Գազել» մակնիշի մեքենաներով՝

<https://www.youtube.com/watch?v=SrHUXNH9Tdw>,

<https://www.youtube.com/watch?v=EzCCTmle0FA>), լցուման

վերաբերյալ ([https://www.youtube.com/watch?v=X\\_c-n6T-bbE](https://www.youtube.com/watch?v=X_c-n6T-bbE)):

Խնդրում ենք Ձեր հրավասությունների շրջանում ուսումնասիրել նշված դեպքերը, ձեռնարկել համապատասխան միջոցներ եւ հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել մեզ»:

Օմբուդսմենի աշխատակազմ - See more at:

<http://www.lragir.am/index/arm/0/right/view/124746#sthash.NxNltcz1.dpuf>